Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-593-14.04.2009-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 65-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ՝ նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում պետք է սահմանվեն հողամասի օգտագործման նպատակներն ու պայմանները: Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի պետական սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) Սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ: Կառավարության համապատասխան որոշմամբ և հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ համայնքի ղեկավարն իրավունք ունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից:»:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
1. ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է նշել, որ հողամասը տրամադրվում է նվիրաբերության պայմանագրով, անհատույց սեփականության իրավունքով և միայն ըստ նշանակության օգտագործման պայմանով: Միաժամանակ անհրաժեշտ է սահմանել, որ նվիրաբերության պայմանագրում և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ պետք է հստակ սահմանվեն՝ հողամասի օգտագործման նպատակները և պայմանները:	1. Ընդունվել է.	Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ՝ նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում պետք է սահմանվեն հողամասի օգտագործման նպատակներն ու պայմանները:»:

	2. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «սոցիալական» բառից հետո նշված «և» շաղկապն անհրաժեշտ է փոխարինել «կամ» շաղկապով, նկատի ունենալով, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, եթե թվարկված պայմանները բաժանված են «և» շաղկապով, ապա բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, իսկ եթե պայմանները բաժանված են «կամ» շաղկապով ապա պարտադիր է պայմաններից որևէ մեկի առկայությունը:	2. Ընդունվել է:	2. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «սոցիալական» բառից հետո նշված «և» շաղկապն փոխարինվել է «կամ» շաղկապով:
	3. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «դեպքում» բառը փոխարինել «նպատակով» բառով:	3. Ընդունվել է:	3. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «դեպքում» բառը փոխարինվել է «նպատակով» բառով:
	4. Նախագծի 2-րդ հոդվածի վերաբերյալ գտնում ենք, որ նախագծով պետք է սահմանել, որ Կառավարության համապատասխան որոշմամբ և հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:	4. Ընդունվել է:	4. Նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Կառավարության համապատասխան որոշմամբ և հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը»:
	5. Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ	5. Ընդունվել է:	Նախագծի 1-ին հոդվածը լրացվել է

	է լրացնել նոր դրույթներ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն իրավունք կվերապահվի Հայաստանի Հանրապետության անունից պետական սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից>>: 6. Նախագծի 2-րդ հոդվածում անհրաժեշտ է լրացնել նոր դրույթներ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ հմայնքի ղեկավարին իրավունք կվերապահվի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից:»:	6. Ընդունվել է:	<<Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի պետական սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից>> նախադասություններով: Նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ հմայնքի ղեկավարն իրավունք ունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Ընդ որում ներդրվող հողամասի կամ դրա նկատմամբ իրավունքի արժեքը չպետք է ցածր լինի տվյալ հողամասի կադաստրային արժեքից>> նախադասություններով:
2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Գ. Աբրահամյան 10.11.2010թ. թիվ 20/058 գրություն	1.Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ քննարկելու նպատակով ներկայացված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակում հարկ եմ	1. Ընդունվել է Առաջարկության ընդունմամբ պայմանավորված համապատասխան փոփոխություն է կատարվել նաև նախագծի 2-րդ հոդվածում:	1. Նախագծի 1-ին հոդվածում «բարեգործական» բառից հետո լրացվել է <<կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային>> բառերը:

	համարում ներառել դրույթ, համաձայն որի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կարող են անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերի շրջանակներում գործունեություն իրականացնող ներդրողներին: Ուստի առաջարկում եմ նախագծի լրամշակված տարբերակի հոդված 1-ում «բարեգործական» բառից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային» բառերը: Նշվածը հիմք կհանդիսանա անհատույց սեփականության իրավունքով հողամասերը տրամադրելու ներդրողին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման հիման վրա, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ ՀՀ կառավարության համաձայնությամբ:		
	2. Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ նախագծի առաջինից երկրորդ ընթերցման լրամշակված տարբերակում ներառված այն դրույթը, համաձայն որի ՀՀ կառավարությունն իրավունք ունի պետական	2. Ներկայացված դրույթը չի հակասում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, քանի որ հիշյալ հոդվածով սահմանվում է, որ	2. Փոփոխություններ չեն կատարվել:

	սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, որոշակի հակասություն է առաջացնում հողային օրենսգրքի 85-րդ հոդվածի հետ և ենթակա է լրացուցիչ քննարկման:	պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հողամասերը կամ հողամասի մշտական օգտագործման իրավունքը ներդնել իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում, մինչդեռ նախագծում սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը իրավունք ունի պետական սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, այլ ոչ թե պետական մարմինները:	